



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Bishop Torkom Manougian, Primate

Թիւ 17013

Փետրուար 28, 1967

Արժանաշնորհ

Տ. Գրիգոր ԲՀՆՅ. Հայրապետեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ  
եւ Նախագահ Մխական Խորհուրդի  
Սառութիւն Միւլվորի.

Սիրելի Տէր Գրիգոր,

Ստացած ենք 1967 Փետրուար 19 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը  
հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 22ին գումարուած Ձեր Մը-  
խական ժողովին մէջ կատարուած է Մխական Խորհուրդի հինգ անգամոց ընտ-  
րութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ըն-  
տրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է թեմական Կանո-  
նադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Մխական  
Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Այս առիթով կը յայտնենք թէ կարգ մը համայնքներ մօտէն չեն հե-  
տեւած թեմական Կանոնադրութեան յօդուածներուն, եւ պակասաւոր տեղե-  
կութիւններ ղրկած են Առաջնորդարան: Ուստի, այժմէն կ'ազդարարենք որ  
յառաջիկային կարեւորութեամբ նկատի պիտի առնենք գործադրութիւնը Կա-  
նոնադրութեան տրամադրութեանց:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել նորընտիր Դիւանի անդամոց  
անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Մխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ

Տիարք՝ Աւագ Ենտիմըմեան  
Հարրի Նապետեան  
Իսահակ Հայրապետեան  
Բողանտ Լիւիզ  
Գարրիէլ Գարրիէլեան